# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 12.04.2021թ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի**
**թիվ ՍՑ-ՆԳ-2020/76**

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 23.03.2021թ. թիվ 26/26-1/4284-2021 գրությամբ «Կրթարան Սոնա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

**1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ոստիկանության 17.03.2021թ. թիվ 3/27/15538-21 գրության հիման վրա, 23.03.2021թ. թիվ 26/26-1/4284-2021 գրությամբ նախաձեռնել է «Կրթարան Սոնա» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

**2. <u>«Կրթարան Սոնա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Կրթարան Սոնա» ՍՊԸ-ն, Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը՝

«Ձեր վարույթում է գտնվում ՀՀ ոստիկանության գրավոր հիմքերի համաձայն, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից «Կրթարան Սոնա» ՍՊԸ-ին (այսուհետև նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ՝ ՍՑ-ՆԳ-2021/76 ծածկագրով ընթացակարգը:

Ընթացակարգը նախաձեռնելու համար Պատվիրատուն ՀՀ ֆինանսների նախարարություն է ներկայացրել 17.03.2021թ. թիվ 3/27/15538-21 գրությունը (այսուհետև նաև՝ Գրավոր հիմքեր):

Ուսումնասիրելով Ընթացակարգը նախաձեռնելու համար Պատվիրատուի ներկայացրած Գրավոր հիմքերը՝ հայտնում ենք, որ ամբողջությամբ առարկում ենք դրանց դեմ:

1.1.Պատվիրատուն 21/01/2021թ.-ին www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (այսուհետև նաև՝ Տեղեկագիր) և www.armeps.am էլեկտրոնային համակարգում հրապարակել է թիվ «ՀՀ Ո ՀԲՄԾՁԲ-2021-ՃՈ/ԹԱՐԳՄԱՆՉԱԿԱՆ» ծածկագրով գնանշման հարցում (այսուհետև նաև՝ Մրցույթ): Մրցույթի գնման առարկան է գրավոր թարգմանության ծառայությունների ձեռքբերումը (այսուհետև նաև՝ Գնման առարկա): Ըստ Մրցույթի՝ Գնման առարկայի ԳՄԱ (CPV) ծածկագիրն է 79531100/503: Մրցույթի հրապարակման պահին նշյալ ծածկագրով Գնման առարկան պարունակող գնումների պլանը Տեղեկագրում հրապարակված չէր:

Գնման առարկան պարունակող «գնումների պլան» վերտառությամբ ֆայլը Պատվիրատուն Տեղեկագրում հրապարակել է 2021 թվականի փետրվարի 4-ին: Սակայն այդ ֆայլը չի համապատասխանում ՀՀ կառավարության 2017 թվականի 13 ապրիլի N 390-Ն որոշմամբ հաստատված «Գնումների պլանի ձևը, դրա լրացման, հաստատման և հրապարակման կարգով» սահմանված գնումների պլանի ձևին:

Ընթացակարգը նախաձեռնելու համար հիմք ծառայած ՀՀ ոստիկանության 17.03.2021թ. թիվ 3/27/15538-21 գրությունում մատնանշված չէ Մասնակցի թույլ տված «խախտումը», որի պատճառով պատվիրատուն դիմել է ՀՀ ֆինանսների նախարարություն՝ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետև նաև՝ Ցուցակ) ներառելու նպատակով:

2. Պատվիրատուի Գրավոր հիմքերի դեմ առարկության հիմքերը և փաստարկները.

2.1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 14-րդ կետով սահմանված է, որ տեղեկագիրը նույն օրենքով նախատեսված հրատարակման ենթակա տեղեկատվության

հրապարակման նպատակով www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքն է:

Օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գնումների պլանը, ներառյալ՝ փոփոխությունները, հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների պլանի:

ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 4-րդ կետի համաձայն. «4. Գնման գործընթացը հետևյալ գործընթացների (գործառույթների) ամբողջությունն է՝ 1) գնումների պլանավորում. 2) գնման գործընթացի կազմակերպում (ներառյալ գնման առարկայի բնութագրերի հաստատումը). 3) պայմանագրի կնքում. 4) պայմանագրի կատարում և կառավարում:»:

Կարգի 16-րդ կետի համաձայն. «16. Գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում: Գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է, (...)»

Կարգի 17-րդ կետի համաձայն. «17. Գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:»:

Կարգի 20-րդ կետի համաձայն. «20. Գնման գործընթացի ընթացակարգի կազմակերպման նպատակով գնման պահանջի ծագման օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր սահմանվում են՝ 1) պատասխանատու ստորաբաժանում, և 2) գնումները համակարգող 3) գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույց: (...)»

Կարգի 21-րդ կետի համաձայն. «21. Եթե գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույցով այլ ժամկետ նախատեսված չէ, ապա գնման պահանջի ծագման օրվան հաջորդող քսան աշխատանքային օրվա ընթացքում պատասխանատու ստորաբաժանումը՝ 1) կազմում և հաստատում է գնման հայտը, (...)»:

Ասպիսով, գնումների հետ կապված բողոքներ քննող անձը իր բազմաթիվ որոշումներում վերլուծելով վերոգրյալ նորմերը եզրահանգել է, եթե գնման ընթացակարգի

հայտարարությունը և հրավերը հրապարակելու պահին՝ ընթացակարգով ձեռքբերման ենթակա գնման առարկան պարունակող գնումների պլանը սահմանված կարգով Տեղեկագրում հրապարակված չէ, ապա այդ գնման գործընթացը համարվում է կազմակերպված առանց իրավական հիմքի և ոչ իրավաչափ: Արդյունքում, Ցուցակում մասնակիցներին ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգերը, նման խախտմամբ կազմակերպված գնման գործընթացների շրջանակներում, գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից նշյալ որոշումներով մերժվել են:

Սույն գործի փաստական հանգամանքներից երևում է, որ Մրցույթը հրապարակելու պահին Գնման առարկան պարունակող գնումների պլանը Տեղեկագրում հրապարակված չէր: Նշյալից էլ հետևում է, որ Մրցույթը կազմակերպվել է վերոգրյալ իրավական նորմերի խախտմամաբ և առանց իրավական հիմքի: Հտևաբար կարծում ենք, որ սույն ընթացակարգի շրջանակներում Մասնակիցը ենթակա չէ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն: Քանի որ իրավական հիմքի բացակայության պայմաններում Մրցույթը կազմակերպվել է ոչ իրավաչափ, ուստի Մրցույթից բխող բացասական հետևանքները չեն կարող մեկնաբանվել ի վնաս Մասնակցի: Նշյալ կարծիքը համապատասխանում է բողոքներ քննող անձի վերոնշյալ որոշումներին:

Գնման առարկան պարունակող գնումների պլանը Տեղեկագրում սահմանված կարգով հրապարակված չլինելու հանգամանքը պարզելու համար, Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք օգտվել՝ ՀՀ Ֆինանսների նախարարի 2018 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 600-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 19-րդ կետով իրեն վերապահված լիազորությունից, այն է՝ ուսումնասիրության առարկա դարձնել Տեղեկագրում հրապարակված Պատվիրատուի գնումների պլանները:

Հարկ է նշել, որ Գնման առարկան պարունակող «գնումների պլան» վերտառությամբ ֆայլը Տեղեկագրում հրապարակվել է 04.02.2021 թվականին, սակայն այդ ֆայլը չի համապատասխանում ՀՀ կառավարության 2017 թվականի 13 ապրիլի N 390-Ն որոշմամբ հաստատված «Գնումների պլանի ձևը, դրա լրացման, հաստատման և հրապարակման կարգով» սահմանված գնումների պլանի ձևին: Ուստի, նշյալից հետևում է, որ Գնման առարկան պարունակող գնումների պլանը Տեղեկագրում հրապարակված չէ: Այս հանգամանքը, մեկ անգամ ևս վկայում է այն մասին, որ Մրցույթը կազմակերպված է առանց իրավական հիմքի և ոչ իրավաչափ:

Նշենք, որ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը իր բազմաթիվ որոշումներում համարել է խախտում այն բոլոր դեպքերը, երբ Տեղեկագրում չեն հրապարակվել ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 13 N 390-Ն որոշմամբ հաստատված «Գնումների պլանի ձևը, դրա լրացման, հաստատման և հրապարակման կարգով» սահմանված գնումների պլանի ձևին համապատասխան գնումների պլաններ: Արդյունքում, Ցուցակում մասնակիցներին ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգերը, նման խախտմամբ կազմակերպված գնման գործընթացների շրջանակներում, գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից նշյալ որոշումներով մերժվել են:

Ելնելով վերոգրյալից, կարծում ենք, որ այս Ընթացակարգի շրջանակներում անհրաժեշտ է կիրառել սույն դիրորոշման մեջ նշված Բողոքներ քննող անձի նախկինում կայացրած որոշումներով արտահայտված իրավական դիրքորոշումները և մեկնաբանությունները, ու Մասնակցին Ցուցակում ներառելու Ընթացակարգը մերժել:

2.2. Բացի այդ, ՀՀ ոստիկանության 17.03.2021թ. թիվ 3/27/15538-21 գրությունում մատնանշված չէ Մասնակցի թույլ տված «խախտումը», որի պատճառով պատվիրատուն դիմել է ՀՀ ֆինանսների նախարարություն Ընթացակարգը նախաձեռնելու համար: Հետևաբար, անորոշ է այն, թե ինչ «խախտում» է թուլ տվել Մասնակիցը կամ արդյո՞ք նա թույլ է տվել որևէ «խախտում», որը վերջինիս կանգնեցրել է Ցուցակում ներառվելու վտանգի առաջ: Ուստի նման անորոշության պայմաններում կարծում ենք, որ այս ընթացակարգը անհրաժեշտ է մերժել նաև այդ հիմքով:

Ինչպես սահմանված է Օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ մասով, Բողոքներ քննող անձն անշահախնդիր և անկախ քննություն իրականացնող մարմին է, որը շահագրգռված չէ կոնկրետ գործի արդյունքներով: Հետևաբար, Բողոքներ քննող անձը պետք է առաջնորդվի կողմերի հավասարության սկզբունքով և պետք է լինի անկողմնակալ, ինչը նշանակում է, որ վերջինիս լիազորությունների մեջ չի մտնում Մասնակցի թույլ տված «խախտումը» Պատվիրատուի փոխարեն մատնանշելը, հակառակ պարագայում Բողոքներ քննող անձը սույն ընթացակարգի շրջանակներում ստանձնելու է Պատվիրատուի դերակատարումը: Որպիսի պաայմաններում կխախտվեն՝ ինչպես հավասարության և անկողմնակլության սկզբունքները, այնպես էլ Մասնակցի իրավունքները»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է ամբողջությամբ մերժել ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից «Կրթարան Սոնա» ՍՊԸ-ին գնումների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված՝ ՍՑ-ՆԳ-2021/76 ծածկագրով ընթացակարգը:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/76 ընթացակարգի շրջանակներում 05.04.2021թ. ժամը 09:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

**3. <u>ՀՀ ոստիկանության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ ոստիկանությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 17.03.2021թ. թիվ 3/27/15538-21 գրությամբ հայտնել է, որ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի համաձայն, ուղարկվում է ՀՀ Ո ՀԲՄԾՁԲ-2021-ՃՈ/ԹԱՐԳՄԱՆՉԱԿԱՆ ծածկագրով գնման ընթացակարգին հայտ ներկայացրած «Կրթարան Սոնա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստաթղթերը և ընթացակարգի արձանագրությունները՝ գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/76 ընթացակարգի շրջանակներում 05.04.2021թ. ժամը 09:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

**4. <u>ՍՑ-ՆԳ-2021/76 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

ՍՑ-ՆԳ-2021/76 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունի հետևյալ փաստը.

ՀՀ ոստիկանության կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՀՀ Ո ՀԲՄԾՁԲ-2021-ՃՈ/ԹԱՐԳՄԱՆՉԱԿԱՆ» ծածկագրով հրատապ բաց մրցույթ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որի հայտարարությունը և հրավերը տեղեկագրում (www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայք) հրապարակվել են ***<u>21.01.2021թ.:</u>***

**5. <u>ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>**

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 23.03.2021թ. թիվ 26/26-1/4284-2021 գրությունը, ՀՀ ոստիկանության 17.03.2021թ. թիվ 3/27/15538-21 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետը սահմանում է, որ **<u>տեղեկագիրը</u>** նույն օրենքով նախատեսված հրատարակման ենթակա տեղեկատվության հրապարակման

նպատակով www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքն է:

Օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ **գնումների պլանը, ներառյալ՝ փոփոխությունները**, հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն **հրապարակում է տեղեկագրում**, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների պլանի:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 4-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը հետևյալ գործընթացների (գործառույթների) ամբողջությունն է՝

**1) գնումների պլանավորում**.

2) **գնման գործընթացի կազմակերպում** (ներառյալ գնման առարկայի բնութագրերի հաստատումը).

3) պայմանագրի կնքում.

4) պայմանագրի կատարում և կառավարում:

Կարգի 16-րդ կետի համաձայն՝ **գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում: Գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է**, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է: Եթե տվյալ տարվա ընթացքում գնումների սկզբնական պլանում չներառված, լրացուցիչ գնումը կատարելու համար նախատեսվում են ֆինանսական միջոցներ, ապա գնումների պլանում կատարվում է լրացում:

Կարգի 17-րդ կետը սահմանում է, **որ գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:**

Կարգի 20-րդ կետի համաձայն՝ **գնման գործընթացի ընթացակարգի կազմակերպման նպատակով գնման պահանջի ծագման օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր սահմանվում են՝**

1) **պատասխանատու ստորաբաժանում,** և

2) **գնումները համակարգող**

3) գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույց:

Կարգի 21-րդ կետի համաձայն՝ եթե գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույցով այլ ժամկետ նախատեսված չէ, ապա **<u>գնման պահանջի ծագման օրվան հաջորդող քսան աշխատանքային օրվա ընթացքում</u> պատասխանատու ստորաբաժանումը՝**

**1) կազմում և հաստատում է գնման հայտը**, որը ներառում է՝

ա. գնման առարկայի բնութագրերը:

Այսպես, ՀՀ ոստիկանության կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՀՀ Ո ՀԲՄԾՁԲ-2021-ՃՈ/ԹԱՐԳՄԱՆՉԱԿԱՆ» ծածկագրով հրատապ բաց մրցույթ, որի հայտարարությունը և հրավերը տեղեկագրում (www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայք) հրապարակվել են ***<u>21.01.2021թ.:</u>***

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Կրթարան Սոնա» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.03.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Կրթարան Սոնա» ՍՊԸ-ն զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձն ուսումնասիրել է Պատվիրատուի կողմից տրամադրված և տեղեկագրում հրապարակված գնումների պլանի վերաբերյալ առկա տեղեկատվությունը և արձանագրել, որ այն հրապարակվել է ***<u>04.02.2021թ.</u>***՝ ավելի ուշ, քան Ընթացակարգի հայտարարությունը և հրավերը, ընդ որում՝ վերոհիշյալ նորմերից բխում է, որ պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման և գնումները համակարգողի համապատասխան իրավասություններն առաջանում են գնումների պլանի հրապարակման հաջորդող օրվանից:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «ՀՀ Ո ՀԲՄԾՁԲ-2021-ՃՈ/ԹԱՐԳՄԱՆՉԱԿԱՆ» ծածկագրով ընթացակարգը կազմակերպվել է առանց իրավական հիմքի, որի արդյունքում խախտվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 16-րդ և 17-րդ կետերով սահմանված պահանջները:

Հաշվի առնելով այն փաստական հանգամանքը, որ Ընթացակարգը կազմակերպվել է վերը նշված իրավակարգավորումների խախտմամբ, գտնում եմ, որ իրավական հիմքի բացակայության պայմաններում կազմակերպված ոչ իրավաչափ Ընթացակարգից բխող բացասական հետևանքները չեն կարող մեկնաբանվել ի վնաս Ընկերության, հետևաբար

հնարավոր չէ արձանագրել «Կրթարան Սոնա» ՍՊԸ-ի կողմից Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտման փաստը, ուստի գտնում եմ, որ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

## Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 23.03.2021թ. թիվ 26/26-1/4284-2021 գրությամբ «Կրթարան Սոնա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝** **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**